ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

4 ապրիլի 2016 թվականի N 40-Ա

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1996թ. մայիսի 6-ի ,, Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին,, ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, ընդառաջելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ռազմական գործողությունների վերսկսման հետ կապված՝ ԼՂՀ բնակչության աջակցությանն ուղղված մարզի համայնքների, կազմակերպությունների և քաղաքացիների նախաձեռնությանը, **կարգադրում եմ.**

1. ԼՂՀ-ի բնակչությանը մարդասիրական օգնություն ցուցաբերելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Դավթյան Վիկտորյա	-	ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական, նախագահ
Ավետիսյան Սեյրան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ
Դավթյան Սաքո	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
Մարտիրոսյան Էդգար	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ
Հակոբյան Հրայր	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ
Հարությունյան Հայկ	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ
Դավթյան Արփինե	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝ ապահովել մարդասիրական օգնության կանոնակարգված առաքման կազմակերպումը ԼՂՀ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. ապրիլի 4
ք. Կապան